ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2016 թվականի N 70-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 61-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 15.08.2016թ <<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2016թ. հուլիսի 19-ին անցկացված մրցույթի արդյունքները չեղյալ ճանաչելու մասին 15.08.2016թ N01/07.1/9712-16 գրավոր առաջարկությունը, **ո ր ո շ ու մ եմ.**

1. Չեղյալ ճանաչել Սյունիքի մարզի <<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար 2016թ. հուլիսի 19-ին անցկացված մրցույթի արդյունքները և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2016թ. հուլիսի 25-ի <<Ա. Մնացականյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 61-Ա որոշումը:

2. Առաջարկել <<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնին՝ խորհրդին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել տնօրենի ընտրության նոր մրցույթ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ.օգոստոսի 22
ք. Կապան